

# ՀԱՄՇԵՆՍԱԿԱՆՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Անվճար

## ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2013 թ. նոյեմբերի 2-4-ը Ստամբուլի Բողազիչի համալսարանում տեղի ունեցավ «Իսլամաց(վ)ած հայերի մասին» թեմայով գիտաժողով, որը կազմակերպել էին Հրանտ Դինք հիմնադրամը, Մայաթիացի բարեգործատեր հայոց մշակութային և համագործակցական միությունը ու Բողազիչի նշանավոր համալսարանը (նախկին Ռոբերտ քոլեջ), որի 150 ամյակը լրացավ այս տարի:

Գիտաժողովում իրենց զեկուցումները կարդացին ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Թուրքիայի և Հայաստանի 26 գիտնականներ, որոնց բազմաթիվ դիմողներից ընտրել էր տարբեր երկրների համալսարանների գիտնականներից (այդ թվում՝ Կիլիկիայից) կազմված 13 հոգանոց հանձնախումբը: Հայաստանից ընտրվել էին 4 գիտնականներ՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից Հրանուշ խառատյանը և Սերգեյ Վարդանյանը, ԵՊՀ-ից՝ Գայանե Չոբանյանը, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտից՝ Աննա Ալեքսանյանը:

Գիտաժողովի 3 օրերին Բողազիչի համալսարանի ընդարձակ դահլիճը լեկվեցուն էր տեղացի, նաև տարբեր երկրներից ժամանած հայ և օտարազգի ունկնդիրներով ու գիտնականներով:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունելի խոսք ասացին Հրանտ Դինքի այրին՝ Ռաբել Դինքը, Բողազիչի համալսարանի նախագահ, տիկին Գյուլայ Բարբարոսյուն, Մայաթիացի բարեգործատեր հայոց մշակութային և համագործակցական միության նախագահ Խոսրով (Հոսրոֆ) Զյուլեթավիթյուն, Հրանտ Դինք հիմնադրամի և Ստամբուլի Սաբանջը համալսարանի աշխատակցուհի Այզե Գյուլ Ալթընայը: Այնուհետև բացման խոսք ասացին հայերիս քաջածանոթ փաստաբան և գրող Ֆեթիյե Չեթինը, Նեզահաթ Աքքոչը և Սիբել Անանը:

Պիտի նշեմ, որ առաջին անգամ էր, որ Թուրքիայում անցկացվող գիտաժողովի պաշտոնական լեզուներն էին ոչ միայն թուրքերենը և անգլերենը, այլև՝ հայերենը, որոնցով հնչած զեկուցումների համաժամանակյա թարգմանությունները ականջակալների միջոցով հասու էին դառնում ներկաներին:

Առաջինն ԱՄՆ-ից, ուղիղ կապով ելույթ ունեցավ Ջեյնեվի Թյուրքյուլմազը, թեման էր «Կրոնափոխության մասին հետազոտություններ. անդրադարձ օսմանյան և հանրապետության պատմությանն ու պատմագրությանը»: Հաջորդ ելույթ ունեցողի՝ Ավետիս Հաճյանի թեման էր «Անատոլիայի հայերի և մերօրյա մահմեդականացված հայերի մասին Ենորիք պատրիարքի առաջարկած չորս դասակարգումը»: Այն Գյուլ Ալթընայի զեկուցման վերնագիրն էր «Մահմեդականացված հայերի շուրջ պատմական և պատմագիտական լուծումներ և նոր հիշատակում ազգային պատկանելության, ազգի և սեռի շուրջ»:

Հաջորդն իմ ելույթն էր՝ «Մահմեդականացված համայնաբանությունը՝ զոհեր և ակամատեսներ»: Բնական է, որ հուզվում էի, քանզի, երևի իր 150-ամյա պատմության ընթացքում, համալսարանի պատերից

## Իսլամացված հայերին նվիրված գիտաժողով Ստամբուլում



ներս առաջին անգամ պիտի հնչեր հայերեն զեկուցում, այն էլ՝ բռնի կրոնափոխության և ցեղասպանության մասին: Ինչպես նշեցի, ելույթները զուգահեռաբար թարգմանվում էին անգլերեն և թուրքերեն: Ինձանից բացի՝ հայերեն ելույթ ունեցան նաև Հրանուշ խառատյանը, Գայանե Չոբանյանը և Գերմանիայից՝ Իշխան Չիֆթեյանը: Ամբողջ գիտաժողովի ընթացքում հայերենից թուրքերեն և թուրքերենից հայերեն թարգմանություններ թարգմանում էր «Ակոս» թերթի հայերեն բաժնի խմբագիր Բագրատ Եսրուբյանը, ում հետ դեռ 2010թ. փոքր խմբով ճանապարհորդել էինք Սև ծովի հարավային ափերով, հասել Համզեն ու Չամլըհեմշին գավառներ: Իսկ մեր՝ հայաստանցիներին խմբին Ստամբուլում գտնվելու բոլոր 7 օրերին ուղեկցում էր Երևանի պետական լսարանի թուրքագիտական բաժնի շրջանավարտ, Հրանտ Դինքի հիմնադրամում կամավոր աշխատակից, մի հրաշալի աղջիկ՝ Վարդուհի Բայանը: Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ իմ խորին երախտագիտությունը հայտնել Բագրատ Եսրուբյանին և Վարդուհի Բայանին:

Եվ այսպես՝ երևի առաջին անգամ Ստամբուլի նշանավոր Բողազիչի համալսարանի ամբիոնից հնչեց հայերեն զեկուցում, էկրանին ցուցադրվեցին եղեռնի առնչվող 44 լուսանկարներ: Վերջում Համզենի բարբառով հնչեց Բողազիչի համալսարանի շրջանավարտ, ծագումով Ռիզեի համալսարանից, երգչուհի Այշենուր Քոլիվարի «Ճորոխի ողբը» երգը: Եվ լուսանկարները, և՛ երգը շատերին հուզեցին ու հետաքրքրեցին, ընդմիջման ժամին նրանք մոտենում էին ու խնդում, որ համացանցով իրենց ուղարկեն լուսանկարներն ու ծայրագրությունը, ինչն արեցի Երևան վերադառնալուց հետո:

Որպեսզի ընթերցողները հնարավորինս լավ պատկերացում կազմեն գիտաժողովի մասին, անհրաժեշտ եմ համարում ներկայացնել բոլոր 26 զեկուցումները՝ հեղինակներին ու վերնագրերը: Եվ այսպես, ըստ հերթականության, հաջորդաբար ելույթ ունեցան Սերափ Դեմիրը՝

«Ջանգվածային կրոնափոխությունը Համզենում», Խոսիայի գավառի համալսարանում ստամբուլաբնակ Մահիր Էօզքանը՝ «Համալսարանական ինքնություն, մշակույթ, լեզու և կրոն», Ուլուր Բահադըր Բայրաքթըրը՝ «Առևանգումը, ամուսնությունը և մահմեդականացումը թանգիմաթի ժամանակաշրջանում», Սելիմ Դերինգիլը՝ (ներկա չէր, զեկուցումը ընթերցվեց) «Ջանգվածային կրոնափոխությունը 1894-1897թթ. համիդյան կոտորածների ընթացքում», Թաներ Աքչանը՝ «Ասիմիլացիան որպես հայերի կրոնափոխության կառուցվածքային բաղադրիչ», Արմեն Մարտիրոսյանը՝ «Վերադարձի չպատմված պատմություն. «մահմեդականացված» հայ ընտանիք Սերգիֆոնում (1915-1919թթ.)», Աննա Ալեքսանյանը՝ «Ռուբեն Հեյրան. Հայոց ցեղասպանությունից հետո հայ կանանց և երեխաների ազատարար», Գայանե Չոբանյանը՝ «Արաբացած հայերի հարցը»: Նոյեմբերի 3-ին զեկուցողները ելույթ ունեցան հետևյալ հերթականությամբ՝ Վահե Թաշյան՝ «Խառնամուսնություն, մարմնավաճառություն, գոյատևում. վերապարտած հայ կանանց վերափոխությունը հետօսմանյան հայ համայնքին», Արդա Մելքոնյան՝ «Սեռը և գոյատևման տարբերակները Հայոց ցեղասպանության ընթացքում», Դորիս Մելքոնյան՝ «Մահմեդական կենցաղ-ցեղասպանության ընթացքում հայ երեխաների փորձը», Իշխան Չիֆթեյան՝ «Մահմեդականացումը որպես գոյատևման կամ անհետացման միջոց. 1915թ. ցեղասպանության ընթացքում հայերի մահմեդականացման տեսություն և պրակտիկա», Հիլմար Կախեր՝ «Հայ քաղաքայինների ասիմիլացիան 1915-1917թթ.», Ունեդի Համելինը՝ «Սասունի հայերի երաժշտական հիշողությունը», Ջաֆեր Սարքեյան՝ «Միայն լիտումն է մնում հուշ, Սևծովյան շրջանի մահմեդականացված հայերը և մի համի մնայուն պատմություն», Նևին Յըլդըզ Թահինջի-օղլու՝ «Գոյություն պատմություն. ի՞նչ է մնում Սառայից», Ռուբինա Փիրույան՝ (ներկա չէր, ընթերցվեց զեկուցումը) «Մահմեդական հայեր, պարադոքս», Ադ-

նան Չելիք՝ «Մահմեդականացված հայ ընտանիքների գոյատևման մարտավարությունը, Դիարբեքիր-Փասուրի (Քուլի) դեպքը», Դավութ Յեշիլմեն՝ «Հայերի ընկալումը ժամանակակից քրդական վեպերում և հավաքական հիշողության ներկայացում», Ռամազան Արաս՝ «Միսիլմենի մահմեդական քրդերի շրջանում մահմեդական հայերի ընկալման վերլուծությունը», Ումիթ Քուրթ և Մուրադ Ուչաներ՝ «Բեսնիից 36 «մահմեդական» հայ երեխաների պատմությունը», Նեզահաթ Գյունդոզան և Քազըմ Գյունդոզան՝ «Հայերը 1937-38թթ. Դերսիմի Թերթեվում», Հրանուշ խառատյան՝ «Ես Դերսիմից եմ», ինքնությունից խուսափելը Դերսիմի բնակչության շրջանում և Դերսիմի ալևի դարձած հայերը», Գյոքչեն Բ. Դինչ՝ «Պաշտպանված, բայց խտրականության ենթարկված Դերսիմի հայեր»: Նոյեմբերի 4-ին զեկուցողները ելույթ ունեցան հետևյալ թեմաներով՝ Վելին Անահիտը՝ «Հիշողության գետերը, հավաքական հիշողության և մշակութային վերափոխման ուսումնասիրություն Թուրքիայի մահմեդականացված հայերի «ձայնի» միջոցով», Ալիս վոն Բիեբերշտեյնը՝ «Ես»-ը որպես դատարկություն», Լորիս Ռիթերը՝ «Վերականգնելով ինքնությունը. ընտանիք կառույցի կարևորությունը ծաղայալ և մահմեդականացած հայերի շրջանում», Անուշ Սյունին՝ «Տարբերության հետևանք, մահմեդականացված հայերի նախադեպը»:

Պետք է նշեմ, որ դահլիճը շատ անմիջականորեն էր արձագանքում ելույթներին, շատերին հնարավորություն ընձեռվեց հարցեր տալ ելույթ ունեցողներին, ինչը երբեմն վերածվում էր սրտաբուխ խոսքի, մարդիկ բարձրաձայնում էին տարիներ շարունակ սրտում ու մտքում թաքցրածը, պատմում էին իրենց պատերի ու տատերի, իրենց ընտանիքների ու հենց իրենց ապրած ողբերգությունների մասին: Բացի այդ՝ կազմակերպվեցին նաև քննարկումներ կրոնի և ինքնության, թոռների թեմաներով: Ամբիոնից իրենց խոսքն ասելու հնարավորություն ունեցան նաև Դերսիմի հայերի միության նախագահ Միրան Փրգիչ Գյուլթեքինը և համալսարանից «Հադիզ» մշակութային միության փոխնախագահ Հիքմեթ Աքչիչեքը:

Նախատեսվում է գիտաժողովում կարդացված զեկուցումները ապագայում հրատարակել թուրքերեն և անգլերեն:

Գիտաժողովին անդրադարձան ոչ միայն Ստամբուլի հայկական թերթերը՝ «Ակոսը», «Մարմարան», այլև թուրքական մի շարք թերթեր և հեռուստատեսություններ, որոնք իրենց գնահատականներում գուսպ էին և հավասարակշիռ:

Վերջում ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի կազմակերպիչներին՝ հյուրընկալության բարձր մակարակի համար: Այդ է վկայում նաև այն, որ 3 օրերի ընթացքում սադրիչ միջադեպեր չեղան, և բոլոր մասնակիցներն ու հյուրերը բարեկամաբար բաժանվեցին:

Հարցազրույցը վարեց՝  
ՎԱՀՐԱՄ ԷՄՄԻԵԱՆ

Իշխան Չիֆթեան ծնած է Պեյրուք:  
Յաճախած է Ազգ. Աբրոր Գասարճեան  
վարժարանն ու Ազգային Սուրեն Խա-



նամիրեան երկրորդական վարժարանը: Աւարտած է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքը: Խմբագրած է կաթողիկոսարանի «Հասկ» հայագիտական տարեգիրքը: Աւարտած է Լայկիցի կամալսարանի աստուածաբանական բաժանմունքը (Գերմանիա): Տոբթորական աստուածաբանը կը պատրաստէ նոյն համալսարանի փիլիսոփայական բաժանմունքին մէջ՝ Հայոց ցեղասպանութեան մասին ու կը դասաւանդէ Համպուրկի համալսարանէն ներս: Չիֆթեան «Հրանդ Տինք հիմնարկ»-ի կազմակերպած «Իսլամաց(ու)ած հայեր» խորհրդածողովին մասնակցեցաւ «Իսլամացումը իբրեւ վերապրումի եւ/կամ անհետացման միջոց» խորագիրը կրող զեկուցումով մը:

Հ.- Նոյեմբեր 2-4 «Հրանդ Տինք հիմնարկ»-ի կազմակերպութեամբ Պոլսոյ մէջ տեղի ունեցաւ իսլամացումած հայերուն նուիրուած գիտածողով մը, որուն մասնակիցներէն էիք: Ի՞նչ է գիտածողովին մասին ձեր ընդհանուր տպաւորութիւնը:

Պ.- «Հրանդ Տինք հիմնարկ»-ը գլխաւոր նախաձեռնողն էր այս գիտածողովին, կամ, ինչպէս կազմակերպիչները կոչած էին, խորհրդածողովին, որ կը վայելէր համագործակցութիւնը Պոլսոյ «Պողագիչի» համալսարանին եւ Մալաթիահայերու «մալաթիա-ՀԱՅ-ՏԵՐ» բարեգործական ու մշակութային միութեան: Տպաւորութիւնս ընդհանրապէս դրական է, երբ մանաւանդ հիմնադրուած անդրադարձ մը կը կատարեմ: Քանի մը կէտերով կուզեմ այստեղ տպաւորութեանս բովանդակութիւնը բանալ:

Ա.) Գիտածողովին վայրը: Նման ձեռնարկ (պատմական) պետական համալսարանի մը մէջ տեղի կունենար: Գիտենք, որ Թուրքիոյ կրթական ամբողջ համակարգը (ուսումնական ծրագիր եւ գործադրութիւն, համալսարան, դպրոց եւ այլն) թրքական պետական անմիջական հսկողութեան տակ կը գտնուի: Վերջին տասնամեակին ծնունդ առած քանի մը անհատական համալսարաններն են՝ «Սապանճը», «Քոչ» եւ այլն, ուր քիչ մը աւելի ազատ կարելի է ուսուցանել եւ ուսանիլ: Սակայն «Պողագիչի»-ն, ինչպէս ըսի, պետական համալսարան է ու հայութեան համար այնքան կարեւոր նշանակութիւն ունեցող Ռոպերթ քուլճը (հիմնուած ամերիկացի միսիոնարներու կողմէ, 1863-ին): Առ ի յիշեցում ու բաղդատութիւն՝ պէտք է ըսել, որ «Հրանդ Տինք հիմնարկ»-ի կազմակերպած անցեալ տարուան գիտածողովը, որ տեղի ունեցաւ Մարտին քաղաքին մէջ (նոյեմբեր 2012), ինչ-ինչ պատճառներով կարելի չէր եղած տեղական համալսարանին մէջ կատարել, այլ՝ պանդոկի մը ժողովարանին, ուր մեծ մասամբ զեկուցաբերները փոխադարձաբար իրարու զեկույց կունկնդրէին: Դրանցի ունկնդիրներուն թիւը քիչ էր: Նման գիտածողովի մը մուտքը, ուրեմն, դէպի պետական համալսարան, պետական «կառոյց», որոշ նշանակութիւն մը ունի: Ոչ «յաղթանակի» կամ «յեղափոխութեան», ոչ իսկ «խանդավառութեան» մասին է խօսքս, այլ կու-

# «Թէեւ խորհրդածողովը «Իսլամաց(ու)ած Հայեր» խորագիրը Կը Կրէր, Սակայն Յատկապէս Ցեղասպանութիւնն Ու Անոր Առնչութեամբ Կատարուած Իսլամացման Արարքը, Իբրեւ Կեդրոնական Նիւթերէն, Հոն Տեղ Գրուած, Յստակ Արտայայտութիւն Կը Գտնէին» «Ազդակ»-ին Ըսաւ Իշխան Չիֆթեան

կան հաստատութեան մը մէջ: Գ.) Գիտածողովին մթնոլորտը: Կը յիշէք թերեւս, որ 2005 թուականի մայիսին, Ճիշդ այս համալսարանին մէջ տեղի պիտի ունենար, առաջին անգամ ըլլալով, հայութեան նուիրուած գիտածողով մը: Այստեղէն «Պիլկի» համալսարան փոխադրուած, մայիսէն սեպտեմբեր յետաձգուած էր ան, ու նաեւ

տէր նոյնիսկ, որ «մենք մեզի» էինք. անոնք, որոնք այս նիւթին մասին տեղեկութիւն պէտք էր ստանային հոն չէին: Խանգարումի մասին չէր իր խօսքը, անշուշտ, սակայն ինք այլ «թերութիւն» մը կը տեսնէր, ինչ որ բնականաբար կազմակերպչական թերութիւն չէր, գոր ես չէի կրնար նկատել: Մասնակիցներուն եւ ներկաներուն քանակը բնական գոհացուցիչ էր. Պոլսէն ու տարբեր երկիրներէ ու քաղաքներէ ժամանած՝ տարեց ու երիտասարդ, հայ, թուրք, քիւրտ, այլազգ, իսլամացած հայերը՝ իրենք, տէրսիմցի ու համշէնցի, բոլորը միասին ըստ իս լաւ թիւ մը կը կազմէին: Սրահը գրեթէ բոլոր նիստերուն մեծ մասամբ լեցուն էր, երբեմն կը յորդէր:



զեմ այս տեղեկութիւնը իբրեւ պարզ տուեալ արձանագրել հոս (այս հաստատումը կը վերաբերի նաեւ յաջորդ երկու կէտերուն):

Բ.) Գիտածողովին նիւթը: Թէեւ խորհրդածողովը «Իսլամաց(ու)ած հայեր» խորագիրը կը կրէր, սակայն յատկապէս Ցեղասպանութիւնն ու անոր առնչութեամբ կատարուած իսլամացման արարքը, իբրեւ կեդրոնական նիւթերէն, հոն տեղ գրուած, յստակ արտայայտութիւն կը գտնէին: Այլ խօսքով, բացէ ի բաց կը խօսուէր ցեղասպանութեան մը, անոր հետեւանքներուն ու երկարամեայ ազդեցութեանց մասին, պաշտօնապէս, պետա-

խանգարիչ ցուցարարներ բողոքի եկած էին համալսարան: Այդ դէպքէն ուր տարի ետք, այս տարի նման խանգարում տեղի չունեցաւ: Որքան որ ես տեսայ, ամէն բան հեզասահ ընթացաւ եւ լաւապէս կազմակերպուած էր թէ՛ հիմնարկին, թէ՛ համալսարանի կազմակերպիչներուն կողմէ: Բազմաթիւ թուրք լրագրողներ ներկայ էին ու արձագանգեցին գիտածողովին: Կարծէ աչք մը նետել հիմնարկի կայքէջին վրայ խնամքով մէկտեղուած յօդուածներուն վրայ: Հարկաւ դուրսէն մասնակցողներս ներքին աչք մը չունինք մանրամասնութեանց համար: Պոլսահայ լրագրող մը, օրինակ, կը գանգա-

տէր նոյնիսկ, որ «մենք մեզի» էինք. անոնք, որոնք այս նիւթին մասին տեղեկութիւն պէտք էր ստանային հոն չէին: Խանգարումի մասին չէր իր խօսքը, անշուշտ, սակայն ինք այլ «թերութիւն» մը կը տեսնէր, ինչ որ բնականաբար կազմակերպչական թերութիւն չէր, գոր ես չէի կրնար նկատել: Մասնակիցներուն եւ ներկաներուն քանակը բնական գոհացուցիչ էր. Պոլսէն ու տարբեր երկիրներէ ու քաղաքներէ ժամանած՝ տարեց ու երիտասարդ, հայ, թուրք, քիւրտ, այլազգ, իսլամացած հայերը՝ իրենք, տէրսիմցի ու համշէնցի, բոլորը միասին ըստ իս լաւ թիւ մը կը կազմէին: Սրահը գրեթէ բոլոր նիստերուն մեծ մասամբ լեցուն էր, երբեմն կը յորդէր:

Հ.- Իսկ գիտածողովի ընթացքին ներկայացուած անգլերէն, հայերէն ու թրքերէն 26 զեկուցումներուն մասին:

Պ.- Եթէ կ'ակնկալէք, որ ներկայացուած բոլոր զեկուցումներուն մասին ամփոփում կամ տեղեկութիւն կրնամ փոխանցել, սկիզբէն ըսեմ, որ յուսախաբ պիտի ընեմ Ձեզ:

Ա. Գիտածողովին հայերէնը.- Ինչպէս կը նշէք, անգլերէն եւ թրքերէն լեզուներուն կողքին նաեւ հայերէնը գործածուեցաւ, որուն ներկայութիւնը, ըստ իս, կարեւոր էր: «Ակօս»-ի աշխատակից Բագրատ Եսթրեանն էր բարեխիղճ թարգմանիչը: Կային չորս հայերէն զեկուցներ՝ երեք արեւելահայերէն ու մէկ արեւմտահայերէն: Գիտէք, լեզուն ինքնին, մանաւանդ գիտածողովի մը համար, պարզապէս հաղորդակցութեան միջոց է: Բայց երբ, քիչ մը մեր հաւաքական յիշողութենէն խմելով ջուրը, գիտենք, որ հայերէնը արգիլուած ու հալածուած էր պատմութեան տարբեր ժամանակաշրջաններուն օսմանեան ու թրքական սահմաններէն ներս, անցեալ դարու յիսունական թուականներէն սկսեալ յաճախ գործածուած՝ «Հայրենակից, թրքերէն խօսէ» կարգախօսը, իբրեւ խտրական ոգիի յուշարար, տակաւին մարդոց ականջին յստակ կը հնչէ, ու Թուրքիոյ մէջ լեզուն, անոր ուսուցումն ու արգիլումը որքան առնչուած են ինքնութեան ու ինքնագիտակցութեան հետ, կրնանք գիտածողովին ընթացքին անոր գործածութեան կարեւորութեան անդրադառնալ: Ինչպէս յայտնի է, դեռ միայն քանի մը տարիէ ի վեր արտօնուած է Թուրքիոյ մէջ քրտերէնով լուրերու սփռումը եւ աւելի ուշ ալ, հոս ու հոն, քրտերէնի դասընթացքը:

Բ. Զեկուցումները.- Զեկուցումներուն եւ զեկուցաբերներուն մասին ամէնէն ընդարձակ եւ ճշգրիտ աղբիւրը «Ակօս» շաբաթաթերթի 8 նոյեմբեր 2013 թուականի թիւ 914-ն է, ուր իւրաքանչիւր նիւթի մասին կարելի է գտնել հարցազրույց, տեղեկանանք, զեկուցումներէն հատուած (մեծ մասամբ՝ թրքերէն ու չորս էջ հայերէն): Ընթացողները կը շեշտեն, որովհետեւ հայ եւ օտար մամուլը շատ անդրադարձան գիտածողովին, սակայն, հարկ է հոս առիթը

օգտագործելով նշել, որ լրագրողական շնչատ ու հպանցիկ ակնարկները երբեմն շատ անելի ժխտական, քան դրական դեր կը խաղան նման պարագաներու: Քանի մը զեկուցաբերներու խօսքն կատարուած ճիշդ ու սխալ մէջբերումներով մամուլը երբեմն խկապէս խանգարիչ դեր ալ կրնայ խաղալ:

Հայ, թուրք, քիւրտ, գերմանացի, ֆրանսացի եւ այլազգ զեկուցաբերներ կային Պոլսէն ու թուրքիոյ տարբեր քաղաքներէն, Հայաստանէն, Պերմանիայէն, Ֆրանսայէն եւ Մ. Նահանգներէն: Այստեղ պիտի յիշեմ երեք օրերու վրայ բաշխուած ութ նիստերուն, փակման կլոր սեղանին ու վերջին գրոյցին նիւթերը:

Ա.- Պատմութեան բեռը, անուանման քաղաքականութիւնը (նստավար՝ Այֆեր Պարթու Ճանտան, զեկուցաբերներ՝ Չէլնեպ Թիւրքելմազ (սքայփով), Աւետիս Հաճեան, Այշէ Կիւլ Ալթընայ):

Բ.- Իսլամացման մերձաւոր եւ հեռաւոր պատմութիւնը (նստավար՝ Սելթեմ Թոքթօզ, զեկուցաբերներ՝ Սերգէյ Կարդանեան, Սերայ Տեմիր, Մահիր Էօզքան, Ուղուր Պահատըր Պայրաթթար, Սելիմ Տերինկիլ (բացակայ, որուն զեկոյցը կարդացուեցաւ):

Գ.- Իսլամացումը՝ 1915-ին. պատմութիւն եւ վկայութիւն, ա. մաս (նստավար՝ Ռայմոնտ Յարութիւն Գէորգեան, զեկուցաբերներ՝ Թաներ Աքչամ, Արմէն Մարտուպեան, Աննա Ալեքսանեան, Գայեանէ Չոպանեան):

Դ.- Իսլամացումը՝ 1915-ին. պատմութիւն եւ վկայութիւն, Բ. մաս (նստավար՝ Ռոնալտ Գրիգոր Սիւնի, զեկուցաբերներ՝ Կահէ Թաշճեան, Արտա Մելքոնեան, Տորիս Մելքոնեան, Իշխան Չիֆթեան, Հիւմար Քայզըր):

Ե.- Յիշողութեան հետքեր. երաժշտութիւն, ճաշ եւ պատումներ (նստավար՝ Ֆերիտունէ Էօզպայ, զեկուցաբերներ՝ Ուէնտի Համըլինկ, Ճաֆեր Սարըքայա, Նելին Ելլուրզ Թահինճիօղլու, Ռուբինա Փիրումեան (բացակայ, որուն զեկոյցը կարդացուեցաւ):

Զ.- Յիշողութիւն, ազգութիւն, կրօն՝ քրտական ինքնութիւն (նստավար՝ Եքթան Թիւրքելմազ, զեկուցաբերներ՝ Ատնան Չելիք, Տաւրթ Եշիւմեն, Ռամազան Արաս, Իմիթ Քուրտ, Մուրատ Ուչաներ):

Է.- Յիշողութիւն, ազգութիւն, կրօն՝ Տէրսիմ (նստավար՝ Մուրատ Իւքսել, զեկուցաբերներ՝ Նեզահաթ եւ Քազըմ Կիւնտոկան, Հրանուշ Խառատեան, Կէօքչէն Տիւնչ):

Ը.- Յիշողութիւն եւ ինքնութիւն (նստավար՝ Միւկէ Կիւրսոյ Աթօքմեն, զեկուցաբերներ՝ Հելին Անահիտ, Ալիս Ֆոն Պիպըրշթայն, Լորընս Ռիթթըր, Անուշ Սիւնի):

Կլոր սեղան՝ «Կրօն եւ ինքնութիւն (զրուցավար՝ Ռուպեր Քոլփաշ, գրուցողներ՝ հայր Պօղոս Լեւոն Չեքիեան (բացակայ), վերայ. Գրիգոր Աղապաւօղլու, Ճեմալ Ուշշայ, Հիտայթ Շեֆթթաթի Թուքսալ), գրոյց՝ «Թռռները» (նստավար՝ Այշէ Կիւլ Ալթընայ, մասնակիցներ՝ Ֆաթիյէ Չեթին, Ֆերտա Պալանճար, Միհրան Փրկիչ Կիւլթեքին, Հիքմեթ Աքիչեք եւ անանուն ներկայացուցիչը աշխատանքային հանդիպման):

Կրօն, պատմութիւն, ակնատեսի վկայութիւն, յիշողութիւն, ինքնութիւն, ազգագրութիւն. ահաւասիկ հետազօտութեանց գլխաւոր բնագաւառները, որոնք իսլամացման հոլովոյթն ու իմաստները համապարփակ մօտեցման մը ենթարկելու կոչուած էին: Անշուշտ գիտաժողով մը լուսաբանիչ է՝ պատմութեան ինչ-ինչ ծալքերուն վրայ լուսարձակումներով, բայց «Իսլամացումը (ու) հայեր» նիւթն ինքնին թէ՛



Չախից՝ Ա. Կարդանեանը (Հայաստան), Ի. Չիֆթեանը (Գերմանիա) եւ Հ. Քուրթթայնը (Հունաստան)

նոր էր իբրեւ խոսքի դաշտ, թէ՛ մասնաւոր իսլամացած հայերու ներկայութիւնը, մասնակցութիւնը, փնտռտուքը, ընդունումը կամ մերժումը կը զգացուէին գիտաժողովին ամբողջ երկայնքին՝ իբրեւ ուղեկից իրականութիւն ու երբեմն՝ տագնապ: Ընդունի՞լ, մերժե՞լ: Գիտաժողովը սկզբնական դրական քայլ մը կը համարեմ. ընդունել կամ մերժել առաջ, նախ բոլորս ալ հրաւիրուած ենք մտիկ ընելու ու համբերելու, որ իսլամահայերը իրենք իրենց որոշումները կայացնեն: Կը համախմբուի՞ն, միութիւն կը կազմեն, Հայաստանի եւ Ափիւրքի օգնութեամբ կը դիմեն. իրենց գործելաձեւը իրենք պիտի որոշեն: Նախ ծանօթանանք՝ թէ՛ մենք, թէ՛ իրենք, քայլ առ քայլ, իրենց պատմութեան, ապրած դառն փորձառութեան, որ լուրջաբար ու ինքնաճանաչմամբ լի կեանք մը եղած է յաճախ: Չեկուցաբերներէն ոմանք կատարած էին հետազօտութիւններ, հարցազրոյցներ ու ի մի բերած անոնցմէ շատերուն կենդանագիրն ու գրոյցը: Յիշողութե-

ան ուսումնասիրութիւնը գիտաժողովին ամէնէն յատկանշական մասն էր: Աւարտի գրոյցն ու կլոր սեղանը գիտաժողովին կու տային կենդանութիւն ու յուզականութիւն՝ գիտութեան տեսութիւններէն դէպի կեանքի գործնականութիւնը կամուրջ մը նետելով: Իսկ երկու աշխատանքային հանդիպումները՝ իսլամացած հայերու յետնորդներուն միջեւ կայացած, տեղի ունեցաւ դռնփակ: Մենք մասնակցութեան իրաւունք չունէինք, միայն իրենց աշխատանքին մասին զեկուցուեցաւ վերջին նիստին ընթացքին:

**Հ.- Թրքական պետութեան արտօնութեամբ նման խորհրդաժողովի մը կազմակերպումը ինչպէ՞ս կարելի է մեկնաբանել:**

Պ.- Կստահ եմ, որ թրքական համապատասխան վերին իշխանութիւնները արտօնութեան համար կանաչ լոյս տուած են: Գիտաժողովի կազմակերպիչներն ալ, իրենց կարգին, գիտցած են հասնիլ կանաչ լոյսի կարելիութե-

ան: Թէ ո՞ր կողմին պէտք է յաջողութեան վարկը վերագրել՝ կարծեմ բաւականաչափ յստակ է: Կարելոր է առաջին հերթին այն, որ նման ձեռնարկ մը տեղի ունեցաւ: Նման գիտաժողովներու համար կատարուած դիմումներն ու բանաձեւումները միշտ բժախնդրութեամբ կը կատարուին, արգիլուած բառեր ու բանաձեւեր կ'արտաքսուին դիմումագրէն, մաղէ կանցուին, ինչպէս կը բացատրէր, առիթով մը, Տիգրանակերտի քաղաքապետութեան մէկ քիւրտ պաշտօնէտէն: Կը զգաք հարկաւ, որ բռնատիրական վարչակարգերու ծանօթ գործելակերպին մասին է խօսքը: Կայ գրուածին ու խօսուածին տարբերութիւնը: Կրնաս թուղթին վրայ բան մը գրել, բայց ամբողջովին ուրիշ բանի մը մասին խօսիլ: Գիտաժողովին պարագային, այս վերջին սահմանն ալ չափով մը զանցուած էր. այնպէս որ, գիտաժողովի ծրագրին մէջ բառացի ներկայութիւն էր նաեւ արգիլուած բառը՝ «ցեղասպանութիւն»: Թէեւ, եթէ անելի նուրբ մանրամասնութեան մը երթանք, կրնանք ըսել, որ ծրագրին մէջ տեղ առած զեկոյցներուն խորագրերուն մէջ Հայոց ցեղասպանութեան ոճրագործ հեղինակութիւնը չէր նշուեր... «Օսմանեան պետութեան կողմէ հայոց դէմ ի գործ դրուած ցեղասպանութիւն» բացատրութիւնը բացակայ էր, ինչ որ կրնայ նշանակել, թէ, այո՛, թերեւ՛ս ցեղասպանութիւն մը տեղի ունեցած է հայոց դէմ, սակայն որո՞նք կողմէ կիրարկուած՝ յստակ արձանագրուած չէր: Այսպիսի մանրութիւն կը զբաղի ուրաջումը, որ իր բոլոր մեքենաները ի գործ կը դնէ քաղաքական ու իրաւական գետնի վրայ ճանաչում ու յստակացում խփանելու համար:

Ուրեմն, պետականօրէն գիտակից նման «թոյլտուութիւն», ոճիրին որակման ճիշդ գործածութեամբ կամ անոր շրջանցմամբ, կրնանք իրաւամբ ենթադրել, որ թրքական պետութեան մարտավարութիւններէն մէկն է, իր քննադատներուն աչքին ցանուած փոշի, յայտարարելու համար, որ նման խորհրդաժողով այսօրուան թուրքիոյ մէջ կարելի է:

Կարծեցեալ նման «տեղբայր»-ի մը կրնայ «հարուած» մը յաջորդել, ինչ որ բնական օրէնք է քաղաքական ու դիւանագիտական գետնի վրայ: Օրէ օր անելի կը յստականայ, որ թրքական պետութիւնը երբեք պատրաստ չէ քայլ առնելու դէպի քաղաքական ամբողջական ճանաչումը Հայոց ցեղասպանութեան: Եւ այն մարգարէները, որոնք քանի մը տարի առաջ կը յայտարարէին, թէ հարիւրամեակին առթիւ թրքական ճանաչում տեղի պիտի ունենայ, հիմա լուռ են... Ընդհակառակը, ինչպէս փորձ. Ռիչըրտ Յովհաննէսեան վերջերս առիթով մը արտայայտուեցաւ, պաշտօնական թուրքիա մեզմէ շատ անելի լաւ կը պատրաստուի հարիւրամեակի դիմագրուման: Իր բոլոր խաղաքարտերը ձեռքին՝ պատրաստ վիճակի մէջ է ան: Մասնաւոր դարաբաղեան կարելի պատերազմի մը հրահրումը կրնայ հարիւրամեակին վրայ շուք սիւնել:

Ճիշդ այս պատճառով է, որ նման գիտաժողովներ հայկական կողմին համար առիթներ են՝ «ըս(ու)ելիքը ըսելու», ներկայութիւն եւ խօսք շեշտելու: Ներկայութեան այս առիթները երբեք պէտք չէ փայտցնել: Առիթը կ'ուզեմ օգտագործել այստեղ հետեւեալն ալ հաղորդելու: Այդ օրերուն Պոլսոյ 32-րդ գիրքի միջազգային ցուցահանդէս-վաճառքը տեղի կ'ունենար: Քանի մը բարեկամներով այցելեցինք:

**Շարունակութիւնը՝ 8-րդ էջում:**



# Սուրբ Ամենափրկիչն օծվեց



Իսկ դեմը՝ Սև ծովն է մինչև հորիզոն: Տիպիկ հայկական եկեղեցի է կարմիր տուֆից: Եկեղեցու բացմանը մնացել էր մեկ ամսից պակաս ժամանակ: Դեռ ընթանում էին եկեղեցու շրջակայքի բարեկարգման աշխատանքները:

Մի քանի լուսանկարներ արեցինք և իջանք ներքև՝ Արկադիի տուն: Նա սեղանին դրեց երեք թղթապանակ՝ լցված եկեղեցու շինարարությանը վերաբերվող փաստաթղթերով: Երբ ես իմ զարմանքը հայտնեցի փաստաթղթերի առատության մասին, նա ժպտաց և գոհունակությամբ ասաց.

- Այս փաստաթղթերը հաղթահարել են սովետական բյուրոկրատիայի արգելքներն ու ներհամայնքային տարածայնությունները: Այդ մասին այսօր խոսել չարժե: Ամեն ինչ անցել գնացել է՝ մնացել է եկեղեցին:

Խ.Թ. - Արկադի, փաստաթղթերից երևում է, որ նախաձեռնող խմբի առաջին նիստը տեղի է ունեցել դեռևս 1989 թվականին: Ի՞նչն է Ձեզ՝ այն ժամանակ երեսունը հազիվ անց երիտասարդին, դրդել ձեռնամուխ լինել եկեղեցու շինարարությանը:

Ա.Ս. - Դրդապատճառը եղել է այն, որ բազմաթիվ հավատացյալ հայեր, այս տարածքում կես դարից ավելի

տեղացի հայերից այն ժամանակ ուրիշ մարդիկ էլ կային, բայց ես՝ աշխատելով «Արմենիա» առողջարանում և ավելի շատ շփվելով հայաստանաբնակ հայերի հետ, ուրիշներից շուտ հասկացա, որ պետք է անցնել գործի: Խ.Թ. - Ե՛վ...

Ա.Ս. - Եվ չորս մոտ ընկերներով՝ ես, Քեչիշյան Ջորիկը, Քեչիշյան Սուրենը և Սուրադյան Սուրենը, որպես նախաձեռնող խումբ, 1989 թվականի մայիսի 7-ին գումարեցինք մեր առաջին նիստը, որտեղ որոշեցինք հունիսի 25 - ին հրավիրել Գագրայի հավատացյալ հայերի ժողով և որոշում կայացնել «Հայ հավատացյալների կազմակերպություն» ստեղծելու մասին: Ժողովին մասնակցում էին քսաներեք հայ հավատացյալներ և որոշումը կայացվեց: Կազմակերպության նախագահ ընտրվեց Ա.Ա. Սուրադյանը, իսկ ես՝ քարտուղար և անցանք գործի... Հետագայում, սկսած 1990 թվականից, նախագահի պարտականությունները ստանձնեցի ես:

Անցան երկար և ծիգ տարիներ, գրեցինք տասնյակ գրություններ տարբեր գերատեսչություններին: Այդ ընթացքում քանդվեց Խորհրդային Միությունը, անցանք վրաց-աբխազական պատերազմի միջով և վերջապես 1994 թվականի ապրիլի 1-ին մեզ եկեղեցի կառուցելու համար հատկացվեց 0.59 հա հողամաս նախկին «Արմենիա» առողջարանին կից տարածքից: Հենց սկզբից այդ տարածքում գտնվող փոքր շինությունը վերածեցինք մատուռի: Այնտեղ, սկզբից մինչև եկեղեցու շինարարության ավարտը, ծառայություններ էին անցկացնում Հարավային Ռուսաստանի հայկական թեմի կողմից այլ վայրերից գործուղված հայ քահանաները: Էջմիածնից հրավիրեցինք ճարտարապետ եկեղեցու նախագիծը կազմելու համար: Եկավ այն ժամանակվա Սուրբ Էջմիածնի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը (1912-2004). Եկեղեցու նախագծի շինարարական մասը կազմեցի ես: Միաժամանակ ձեռնամուխ եղանք հողամասի մաքրման աշխատանքներին շրջանի տարբեր բնակավայրերից ժամանող կամավորների օգնությամբ: Շինարարությունը սկսեցինք միայն 2007 թվականին:

Եվ այսպես իրականացավ իմ կյանքի գլխավոր նպատակը, որի համար իմ խորին շնորհակալությունն են հայտնում բազմաթիվ բարերարներին և հավատացյալներին: Առանձնապես իմ խորին շնորհակալությունն են հայտնում Գագրայի բնակչուհի, պատերազմում որդի կորցրած աբխազուհի Լամարա Ձաբչիբային, որը մեզ նվիրեց իր տան կառուցման համար նախատեսված ամբողջ վարդագույն տուֆը:

Եկեղեցու օծման արարողությունը տեղի ունեցավ նոյեմբերի հինգին Հարավային Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Մովսես Եպիսկոպոս Մովսեսյանի ղեկավարությամբ և Կրասնոդարի երկրամասի այլ շրջաններից ժամանած տասնչորս հոգևորականների մասնակցությամբ: Ներկա էին նաև Աբխազիայի պետական գործիչները, Աբխազիայի հայերի միության ղեկավարությունը, Էջմիածնից ժամանած միանձնուհի Ելիզավետան և այլոք:

**ԽԱՀԱՏՈՒ ԹԱՀՄԱԶՅԱՆ**  
**Աբխազիա**

Վերջապես Աբխազիայի հայկական համայնքն ունի իր հոգևոր կենտրոնը: Գագրայում բացվեց Աբխազիայի առաջին միակ հայկական Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին, որ չկար անցյալ դարի երեսնական թվականներից հետո:

Ցանկացած եկեղեցի դեպի իրեն է ձգում մարդկանց, նույնիսկ այնպիսիներին, ովքեր իրենց հավատացյալ չեն համարում: Այստեղ մարդիկ մի տեսակ զգաստանում են, իրար հեշտ են հասկանում, միավորվում են մի ինչ որ գաղափարի շուրջ՝ դեն գցելով առօրյա կյանքի տարածայնությունները: Իսկ միասնությունը մեզ շատ է պետք՝ հատկապես աբխազախայերիս: Իհարկե մեր՝ հայերիս, ամենամեծ թերությունը՝ ինքնուրույնությունը, շատ անգամ դրական դեր է խաղացել գոյատևման համար մեր մղած պայքարի տարիներին, բայց երբ գալիս է միավորվելու ժամանակը՝ առաջ շարժվելու և բարգավաճելու համար, միասնություն է պետք: Իսկ մենք, շատ հաճախ, միավորվում ենք «երբ դանակը հասնում է ոսկորին»:

Ինչևէ, այսօր տոն է: Մոռանանք տարածայնությունների և առօրյա հոգսերի մասին...

Մինչ այդ, երբ միտք ծագեց հողված գրել եկեղեցու կառուցման մասին, այստեղ ինձ օգնության հասավ իմ վաղեմի ընկեր Վահան Վարվաշտյանը՝ Վահան Մենակեցին: Նա ասաց, որ այդ հարցից ամենատեղյակը Արկադին է և տվեց նրա հեռախոսի համարը: Ես անմիջապես զանգեցի Արկադիին, ներկայացա և պայմանավորվեցի հանդիպման մասին:

Հանդիպեցինք նրա գողտրիկ տանը, որը գտնվում է Գագրայի կենտրոնական փողոցի վրա՝ շրջանային դատարանի հարևանությամբ: Նա ինձ առաջարկեց սկզբում գնալ եկեղեցի, իսկ հետո շարունակել մեր գրույցը: Իհարկե, ես նախկինում եղել էի այնտեղ և տեղյակ էի եկեղեցու շինարարության ընթացքի մասին, բայց մեծ ուրախությամբ ընդունեցի Արկադիի առաջարկությունը:



Գմբեթի խաչի օծման և տեղադրման արարողության ժամանակ:



Արկադի Սարգսյանը ցուցադրում է իր անվանական սալիկը, որը տեղադրվելու է եկեղեցու հիմքում:

Եկեղեցին կառուցվել է մի բարձրադիր տեղում, նախկին «Արմենիա» առողջարանի հարևանությամբ, թիկունքում անտառապատ սարերն են,

հայկական եկեղեցի չլինելու պատճառով, հաճախում էին ռուսական եկեղեցիներ և աստիճանաբար հեռանում իրենց արմատներից: Այդպես մտածող

5.11.2013 г., Абхазия, Гагра. Поднявшееся над многострадальной землей Абхазии солнце, обласкав своими лучами крест, погладило купол и открыло взору церковь, засиявшую всем своим великолепием цветами розового туфа. Начался новый день, день освящения и открытия церкви, построенной в соответствии с лучшими традициями армянского церковного зодчества.

При огромном скоплении народа и сослужении священников Епархии Армянской Апостольской церкви Юга России епископ Мовсес Мовсесян, став на колени, трижды постучал крестом в дверь и попросил Создателя открыть врата Храма.

Все вопли и, в соответствии с неизменными вековыми традициями, начался обряд освящения церкви Аменапркич, возведенной в г. Гагра. Освятив 8 колонн церкви, накопильный крест, купели и святые изображения, србазан Мовсес провел первую литургию и благословил присутствующих.

По приглашению духовного пастыря абхазских армян Тер Седрака прихожанам и участникам церемонии от имени меценатов был преподнесен традиционный матах (благотворительный обед).

Какой же праздник без веселья? Местная молодежь и прибывшие из Краснодара прихожане церкви Святого Саака и Месропа пели и плясали. В пришедших из глубины веков

## В Абхазии открыта армянская церковь



завораживающих движений "Тртрук", "Егек" и "Крунк" легко угадывались танцы армян Амшена и Артвина, Карса и Орду, Трабзона и современной Армении. Среди многих старинных песен, прозвучавших во дворе церкви, были армянские песни и на амшенском диалекте.

В более чем 3-х тысячной людской массе выделялось одухотворенное лицо председателя армянской религиозной общины г. Гагра Аркадия Саркисяна. Сбылась мечта его жизни - на протяжении 25 лет он упорно шел к своей цели, строительству армянского храма на территории Абхазии. Начав работу еще в советский период, он не останавливался в военные и послевоенные годы. В этот день

мянской общины, бизнесмены Андрей Амосов, Авет Данелян и Алик Минасян, принеся в дар туф гагрская семья Дзяпшипа Ламары, профессор Сергей Календжян и многие граждане, по крупицам собиравшие средства и по зову сердца безвозмездно трудившиеся при возведении храма. Вспомнил добрым словом и варпета Бориса. Борис умело использовал старинную армянскую технику церковного строительства и в Абхазии. С особой теплотой и благодарностью А. Саркисян отозвался о руководителях республики, которые с самого начала поддержали его и на всех

топись армянского народа и церкви в Абхазии.

Трудно описать словами ту роль, которую играет в жизни нашего народа вера, сопровождающая и в дни радости, и в дни траура. Вот почему мы щепетильны в вопросах строительства культовых сооружений. Как же иначе, если даже наш главный храм - Эчмиадзин был возведен первым Католикосом Всех армян Григорием Лусаворичем по велению Единородного сына Божьего.

И строительство храма в Гаграх также не обошло Святое Знамя. Как только строители залили фундамент, присутствовавшие заметили и успели зафиксировать на фото свечение двух лучей, опускавшихся с неба на только что положенное основание будущего храма. Кстати, такое же свечение успели зафиксировать на фото и в армянском храме Сурб Хач в Сочи, где варпет Гарик почувствовал нечто и увидел свечение при водружении креста над аркой.

Храм для армян - это не только религиозный, но и духовно-воспитательный и культурный центр, являющийся источником жизни народа. Пусть и церковь Аменапркич ведет наш народ из поколения в поколение по жизни, вдохновляя на новые добрые свершения!

Г. А. Сароян  
г. Сочи



А. Саркисян не стал вспоминать о трудностях, с которыми ему приходилось сталкиваться. Он лишь с благодарностью отозвался о людях, сплотившихся вокруг выстраданной идеи возведения церкви - Галуст Трапизонян, руководители ар-

этапах с пониманием относились к вопросам возведения культового сооружения. Скромный Аркадий в череде имен не стал называть свою жену Гоар - а ведь именно она все эти годы, находясь рядом с ним, продолжает работать, ведя ле-

## В ГАГРЕ ОСВЯЩЕНА ЦЕРКОВЬ СУРБ АМЕНАПРКИЧ

Десятилетиями наша община была лишена возможности справлять свои религиозные и духовные потребности в армянском храме. Часовни, построенные армянами, прибывшими после страшных событий Геноцида в приютившую их Абхазию, в тридцатые годы гонений на церковь были уничтожены, а часть священников репрессирована. На протяжении веков армянская церковь была не просто местом религиозных отправлений, а являлась центром, где хранились духовные и культурные ценности народа. Благодаря церкви сохранялось его единство. А ее священнослужители при необходимости с оружием в руках защищали свою паству.

Все, кто хотел принять участие в этом празднике, приехали со всех уголков Абхазии. Литургию, которую в храме отслужил глава епархии Армянской Апостольской церкви Юга России епископ Мовсес Мовсесян, сопровождало прекрасное пение церковно-приходского хора церкви Успения Пресвятой Богородицы (г. Армавир, Краснодарский край). После окончания литур-



гии при выходе из храма он отведаль и благословил хлеб с солью, преподнесенный ему двумя девушками в национальных нарядах. Далее србазан обратился к присутствующим с напутственной речью, в которой благословил каждого и выразил уверенность в том, что завтрашний день будет лучше, так как "теперь у вас есть мес-



то общения с вечностью". Церковь получает имя Сурб Аменапркич - Христа Спасителя. Это праздник для всей Абхазии, отметил Мовсес србазан, потому что строительство святого храма на святой земле Абхазии принесет ей благо. Он поблагодарил всех, кто оказал материальную, моральную и физическую поддержку для то-

го, чтобы храм состоялся. Выразил благодарность Первому президенту Абхазии Владиславу Ардзинба и абхазскому народу. За особые заслуги при осуществлении строительства церкви Герой Абхазии Галуст Трапизонян и Аркадий Саркисян были награждены Орденом Святого Вардана. Благотворителем высокого уровня был назван предприниматель из Краснодар Андрей Амосов, в самое трудное время вставший рядом и внесший достойный вклад в строительство. Пусть свет веры, который зажегся здесь, освещает его путь. Вместе с ним на самом первом этапе возведения стен церкви были предприниматель из Краснодар Карен Григорян, ученый-экономист из Москвы Сергей Календжян, Авет Данелян, который осуществлял перевозку грузов через границу. Мовсес србазан выразил благодарность Степаняну Варгану и Аракеляну Артуру, подарив-

шим хачкары, вручил также благодарственные грамоты всем, кто внес лепту в святое дело. Среди названных особо хочется отметить и жительницу Гагры Ламару Дзяпшипа. Она отдала в дар туф, приобретенный для строительства дома. Эта простая абхазская женщина не могла взять деньги за туф, узнав, что его просят продать для строительства храма. Не все в этом мире покупается и продается, и пусть высота духа этой замечательной женщины станет образцом для подражания, особенно для молодого поколения, и послужит укором тем, кто не понимает, что материальная выгода сиюминутна, и не возвышает человека, а только бескорыстие и добрые дела оставляют добрую память. При церкви будет создана книга, в которую будут занесены имена всех, кто внес вклад в строительство церкви.

Гаянэ Атоян  
Абхазия

# Ներկայացվում է լրագրողը

Մեր թերթի ընթերցողներն, անշուշտ, նկատել են, որ սովորաբար «Չայն համշենականում» առաջին անգամ հանդես եկող հեղինակների մասին տպագրում ենք որոշ կենսագրական տվյալներ: Այս անգամ խնդրեցինք Աննա Մուրադյանին պատմել իր մասին:

- Տարիներ առաջ, երբ թերթերից մեկում կարդացի Կովկասի ինստիտուտի Լրագրության բաժնի հայտարարությունը՝ բոլորովին չէի պատկերացնում, որ դրանից շատ հետո բազմաթիվ անգամներ հիշելու էի այդ դեպքը:

Իսկ դեպքից առաջ լրագրող աշխատելու փորձ ունեցել էի: «Էջմիածին» հեռուստաընկերությունում, որտեղ հայտնվել էի շատ պատահական ու նույնպիսի պատահական հանգամանքների բերումով էլ դուրս եկա: Սակայն լրագրող լինելու «ցեցով» վարակվելու և այդ «ցեցի» անմիջական ազդեցությունը սեփական մաշկիս զգալու նախադեպը չէր մոռացվում, ու անմիջապես հասկացա՝ եկել է

փոփոխությունների ժամանակը:

Աշխատանք ունեի, որից հոգնել էի ու առանց ափսոսելու գործից ազատվելու դիմում գրեցի: Հաջորդ օրը Կովկասի ինստիտուտում պարզում էի պահանջվող փաստաթղթերի ցանկը, իսկ որոշ ժամանակ անց արդեն Լրագրության ֆակուլտետի ուսանող էի: Դա 2007թ.-ն էր:

Մեկ տարի սովորելուց և ավարտելուց հետո ինտերնետ ակումբներում աշխատանք առաջարկող կայքերում լրագրողի գործ փնտրելու արդյունքում էլ հայտնվեցի «Անկախ» շաբաթաթերթում, որտեղ հմուտ խմբագրի առաջնորդությամբ արեցի լրագրողական առաջին քայլերս:

Առաջին գլխավոր՝ «Նա/Նե» Բրիտանական խորհրդի կազմակերպած լրագրողական մրցույթի առաջին մրցանակն ստացա արդեն 2010թ.-ին, որին հաջորդեց «Մարդը կարիքի մեջ» չեխական կազմակերպության Մանկական թրաֆիկինգի թեմայով մրցույթը, որտեղ ևս արժանացա առաջին մրցանակի:

2011թ.-ին միացա «Հետք» հետաքննական լրագրողների խմբին, այնուհետև սկսեցի համագործակցել տարբեր մեդիա կազմակերպությունների հետ:

Իմ աշխարհայացքը մեծապես փոխվեց 2010թ. ԱՄՆ դեսպանատան ֆինանսավորմամբ «Համայնքային կապեր» ծրագրի շրջանակներում ԱՄՆ կատարած 20-օրյա լրագրողական շրջայցը, որի արդյունքում իմ համար ձևակերպեցի ամերիկյան երազանքի հայկական տարբերակը:

Այժմ ազատ լրագրող եմ ու համագործակցում եմ տարբեր մեդիաների հետ: Լրագրողական հետաքրքրություններիս կիզակետում մարդու իրավունքներն են, կնոջ և տղամարդու իրավահավասարությունը, ինչպես նաև հակամարտություններն ու դրանց տրանսֆորմացիան: Դե իսկ բոլոր այս թեմաներից զատ, ինձ ամենաշատը հետաքրքրում է մարդկային պատմությունը:

Բոլորովին վերջերս Հրանտ Դինք իմ նաղրամի շնորհիվ այցելեցի Ստամբուլ,



ապա Դիարբեքի, մասնակցեցի իսլամացված հայերին նվիրված առաջին կոնֆերանսին, ծանոթացա բազմաթիվ տեղացի հայերի, ինչպես նաև Հայաստանից Ստամբուլ արտագաղթած հայերի հետ, որի արդյունքում էլ ծնվեցին մի շարք հոդվածներ:

Ս. Վարդանյան

## Աննա Մուրադյան

Թեպետ հարկադրաբար կրոնափոխ եղած հայերի մասին տարեգրությունը սկսվում է տարածաշրջան՝ սելջուկ ցեղերի ներթափանցման ժամանակներից ի վեր, սակայն, ժամանակակից գիտական դիսկուրսում այն դիտարկվում է 1915թ. Ցեղասպանությունից սկսած, երբ կյանքը պահպանելու համար հայերը սկսեցին համատարած մահմեդականություն ընդունել:

Իսլամացման պրոցեսը շարունակվել է 1923թ. Թուրքիայի հանրապետության հռչակումից հետո նույնպես, քանի որ Թուրքիան որդեգրել էր քուրդ, հայ, գազա, ալևի, չերքեզ, ասորի և այլ ազգերից միատարր էթնիկ պատկանելությամբ ազգային պետություն կառուցելու քաղաքականությունը, որը մասնակիորեն հաջողվեց: Այդ քաղաքականության արդյունքում Կեսարիայից, Դիարբեքիից, Սեբաստիայից և հայաբնակ այլ վայրերից՝ Ցեղասպանությունից ինչ-որ կերպ մազապուրծ եղած մոտ 200 հազար հայերի մի հատվածը զանգվածայնորեն մահմեդականացավ, իսկ մի մասն էլ տեղափոխվեց Ստամբուլ կամ այլ երկրներ, քանի որ ըստ հրամանի՝ միայն Ստամբուլում էին գործում հայկական դպրոցներ և եկեղեցիներ:

Թուրքիայի տարբեր բնակավայրերում գտնվող անգամ իսլամացած հայերը մշտապես վախեցել և խնամքով թաքցրել են իրենց հայկական արմատները՝ հատկապես գավառներում: Ահա մի հատված Հրանտ Դինք իմ նաղրամի հրատարակած Ֆերդա Բալանջարի կողմից խմբագրված և հավաքագրված «Լեռնային ձայները. Դիարբեքիի հայերը խոսում են» գրքում տեղ գտած 16 մարդկային պատմություններից մեկից. «1950թ. Կարապետին սպանեց մի քուրդ: Նա մոտեցել և նրան ասել էր. «Դու հայ ես: Քո ոսկորները մեղսալից են, եթե անգամ դու դարձել ես մահմեդական»: Եվ սպանեց նրան: Հենց այնպես: Ցերեկվա լույսով: Ահա թե ինչպես սպանվեց Կարապետը, ով դարձել էր Սուլեյման»:

Հայ գիտական միտքը Թուրքիայի իսլամացված հայերին դասակարգում է երկու խմբով. ծպտյալ հայեր, որոնք թեպետ ընդունել են իսլամ և պահպանում են մահմեդական կրոնի պարտադիր ծեսերը, սակայն ներքուստ ունեն հայ ինքնության գիտակցում և իրենց կենցաղային մշակույթում շարունա-

# Թուրքիայի իսլամացված հայերը



կում են պահպանել հայ ինքնությունը բնորոշող որոշ տարրեր և մարդիկ, որոնք թեպետ տեղյակ են, որ իրենց նախնիները հայեր են եղել, բայց նրանց կենցաղավարության և ինքնության մեջ հայկական ինքնությունը չափազանց աննշան է:

Հայ համայնքը կենտրոնացված է Ստամբուլում, և թեպետ որևէ պաշտոնական տվյալ չկա թվաքանակի մասին, քանի որ մարդահամարը էթնիկ պատկանելության մասին որևէ տեղեկություն չի պարունակում, սակայն շրջանառության մեջ է 50 հազար թիվը:

«Ակոս» շաբաթաթերթի խմբագիր Բազրատ Եսրուբյանն ասում է, որ մի գուցե նրանք 80 000 են: «Մենք գիտենք, որ Մուշին մեջ 12000 հայեր են ապրում. սա թուրքերն են ասում, ու պատրիարքն էլ հաստատում է, ասում է նա, - սակայն մենք նրանցից ոչ մի լուր չունենք: Մենք ազգից վերածվեցինք համայնքի, որը մեր համար ծանր է իհարկե, բայց դա այդպես է»:

2002թ. տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում իշխանության եկած «Արդարություն և զարգացում» կուսակցության հարթանակը նոր էջ բացեց Թուրքիայի պատմության մեջ՝ այդ թվում նաև կրոնական և էթնիկ փոքրամասնությունների համատեքստում: Թեպետ այն իսլամիստական ուղղվածություն ունի՝ հենվելով Ֆեթուլահ Գյուլենի գաղափարախոսության վրա, սակայն վեր-

ջինիս ուսմունքը ենթադրում է իսլամի համադրություն արդիականության հետ և ժողովրդավարական ֆորմաների կիրառմամբ արևմտյան քաղաքակրթության օգտակարի գուգահեռում իսլամական մշակույթի հետ:

«Այդ ընթացքին իշխանափոխություն տեղի ունեցավ և վարագույրից այս կողմ գտնվող դերակատարները սկսեցին գործել ու հաջողեցին չեզոքացնել վարագույրի հետևում գտնվող դերակատարներին, որոնք էին հիմնականում բանակն ու խոշոր գեներալները, - ասում է «Ակոս» շաբաթաթերթի խմբագրապետ Ռոբերտ Քոփթաշը. - և այս՝ գլուխը կապած կրոնականները մեր համար ավելի լավ են, քան քեմալիստները»:

Ըստ այդմ, որոշակի քայլեր արվեցին մարդու և ազգային փոքրամասնությունների իրավունքները հարգելու ուղղությամբ, որի արդյունքում որոշակի թվով հայեր սկսեցին խոսել իրենց հայ ինքնության մասին, նրանցից ոմանք քրիստոնեություն ընդունեցին:

Դիարբեքիից 83-ամյա Սարգիսը (թուրքերեն անունը Սիթիսի), պատմում է, որ 2002թ. քրիստոնեություն է ընդունել: «Հենց հնարավորություն եղավ՝ ես քրիստոնեություն ընդունեցի, - ասում է նա, - բազմաթիվ հայեր կան, որոնք իրենց մահմեդական են ներկայացնում, սակայն ես ինձ միշտ քրիստոնյա եմ զգացել, քանի որ հայ լինել՝ նշանակում է լինել քրիստոնյա»:

Սա ևս մեկ այլ հանգամանք է, որը մեծ ազդեցություն ուներ և շարունակում է ունենալ մարդկանց ճակատագրերի վրա: Քանի որ մարդիկ հարկադրաբար կրոնափոխ են եղել՝ նրանց գիտակցության մեջ ամուր նստած է եղել միտքը, որ նրանք այլևս հայ չեն: Մարդիկ կան, սակայն, որ սերունդների միջով կրում են հայ լինելու հիշողությունը՝ չիմանալով թե ինչ անել դրա հետ:

Մեկ այլ դիարբեքիից՝ 40-ամյա Արամը, ով շարունակում է մահմեդական լինել, օրեցօր ավելի լայն շրջանառվող խոսակցությունների արդյունքում հանկարծ հասկացել է, որ մահմեդական լինելով՝ հնարավոր է իրեն նաև հայ զգալ: «Ես հայ եմ, - ասում է նա, - ու դա անասելի թեթևացում բերեց իմ սրտին, երբ ես հասկացա, որ մահմեդական լինելով կարող եմ ինձ հայ զգալ»:

Քոփթաշն ասում է, որ Թուրքիան, թեպետ, այս տարիների ընթացքում ժողովրդավար երկիր չդարձավ, այնուամենայնիվ, ԵՄ թեկնածու լինելու, քրդական հարցի և համաշխարհային փոփոխությունների համատեքստում՝ ներքին զարգացումների շնորհիվ որոշակիորեն փոխվեց:

«Հայությունն էլ օրակարգում տեղ գտավ իր համար և մուսուլմանացած հայերի մասին գրքեր գրվեցին ու այս հարցը ավելի շատ կծեծվի ու օրեցօր մեծ լսարան կունենա, - ասում է Ռոբերտ Քոփթաշը. - այս շնորհիվ մուսուլմանացված հայերը ավելի շատ սկսեցին բացվել, ու Հրանտ Դինքը «Ակոսում» սյունակներ բացեց ծպտյալ հայերի մասին, ու լիքը մարդիկ հայտնվեցին ու քաջալերվեցին խոսելու այս մասին:

Ամենալուրջ արծազանք գտած հողվածներից մեկն էլ առաջին կին թուրք օղաչու, Քեմալ Աթաթուրքի հոգեզավակ դստեր՝ Սաբիհա Գյոքչենի մասին էր, որտեղ Դինքը բացահայտեց, որ աղջիկը Այնթափի հայկական որբանոցից որդեգրված խաթուն Սեբիլյանն է:

Այս զարգացումներից հետո Թուրքիայում ավելի ու ավելի հնչելություն ստացավ մուսուլմանացած հայերի հարցը, թեպետ այն, իրականում, գտնվում է հայ և թուրք մտավորականների ու գիտական շրջանակների քննարկման դիսկուրսում. լայն հանրությունը այս մասին տեղյակ չէ:

Հրանտ Դինքը, ով մուսուլմանա-



ցած հայերի հարցերը բարձրաձայնող ջատագովներից էր, մշտապես հանդես էր գալիս այդ թեմային նվիրված կոնֆերանս կազմակերպելու ակտիվ նախաձեռնությամբ: Նա միշտ կրկնում էր, որ Թուրքիայում արդեն մեծ թվով մարդիկ կան, որոնք բավական քաջություն ունեն բարձրաձայն ասելու, որ իրենց նախնիները հայ են: «Եթե Թուրքիան միանա ԵՄ-ին, ապա ոչ պակաս, քան 2 մլն. հայ կլինի այստեղ»,- ասել է նա:

### Իսլամացված հայերին նվիրված առաջին կոնֆերանսը

Այն պետք է կազմակերպվեր դեռևս 2005թ., սակայն թուրքական իշխանությունները կազմակերպիչներին մեղադրեցին դավաճանության մեջ և հասարակական մեծ ճնշման ազդեցության պատճառով Ստամբուլի Բողազիչի համալսարանը, որտեղ այն պիտի լիներ՝ հրաժարվեց:

Հրանտ Դինքն ու «Ակոս» թերթը այս քննարկման ծավալման համար առանցքային դեր են ունեցել և Դինքի մահից հետո «Ակոսը» շարունակում է իրականացնել այդ նախաձեռնությունը: Թեմայի նկատմամբ հետաքրքրությունը գնալով ավելի էր աճում, և այն արտահայտվում է նաև գրականության մեջ և տարաբնույթ գիտական և լրագրողական հոդվածներում: Այս ընթացքում մուսուլմանացած հայերի մասին 18 գիրք է գրվել, որից առաջինը՝ Սերդար Ջանի «Տատիկիս հեքիաթները», լույս է տեսել 1991թ., սակայն մեծ տարածում չի գտել, թերևս, ժամանակների պատճառով:

Իսկ արդեն 2004 թ. լույս տեսած Ֆեթիյե Չեթինի «Մեծ մայր» վիպակը, որը նրա Սեհեր անունով մայրական տատի՝ մահմեդական տղամարդու հետ ամուսնացած Հրանուշ Կատարյանի պատմությունն է, շատ լայն արձագանք ունեցավ ու թարգմանվեց տարբեր լեզուներով, այդ թվում նաև հայերեն՝ թուրքագետ Ռուբեն Մելքոնյանի կողմից, ընդ որում 2011թ. այն վերահրատարակվեց:

Ընդհանրապես «տատիկների» կամ մեծ մայրերի թեման շատ արդիական է իսլամացված հայերի շրջանում, քանի որ կոտորածից փրկված բազմաթիվ հայ աղջիկներ բռնի իսլամացվել ու հարկադրաբար ամուսնացվել են մահմեդականների հետ, սակայն չմոռանալով իրենց հայ ինքնության մասին՝ ժամանակի ընթացքում պատմել են իրենց պատմություններն իրենց թոռներին, որոնք էլ սկսել են խոսել այդ մասին:

«Ինչո՞ւ են այսքան կանայք խոսում այս մասին,- ասում է Սաբանջը համալսարանի դասախոս, հայ արմատներով Այշե Գյուլ Ալթընայը,- որովհետև 1915թ. բազմաթիվ տղամարդիկ սպանվեցին. իմ տատը ևս մահմեդակացված հայ կին էր»:

Իրականում, թեպետ եղել են նաև փրկված արական սեռի հայ մանուկներ, սակայն մեծ հայրերի թեման հիմնականում չի շոշափվում: Այդ մասին Ֆեթիյե Չեթինի ու Այշե Գյուլ Ալթընայի հեղինակությամբ հրատարակված «Թոռներ» գրքում անդրադարձ կա. «Քանի որ մայրական կողմիս տատիկն էր հայ, ապա մեզ «հայի վիժվածք» չէին ասում, սակայն մի ընկեր ունեի, ում հոր մայրն էր հայ, շարունակ հայիցում էին նրան»:

Եվ 8 տարի անց՝ այս տարվա նոյեմբերի 2-4-ը նույն համալսարանում Հրանտ Դինք հիմնադրամի նախաձեռնությամբ վերջապես, տեղի ունեցավ իսլամացած հայերին նվիրված



Քիտածողլի մասնակիցները եւ լրագրողները Կեդրոնական վարժարանում:

կոնֆերանսը, որը մեծ լսարան էր հավաքել ու լայն ռեզոնանս առաջացրել: 200 մասնակցի համար նախատեսված կոնֆերանսին մասնակցելու հայտ էր ներկայացրել 600 մարդ:

Բացման խոսքում համալսարանի ռեկտոր Գյուլայ Բարբարոսոլուն նշեց, որ միջոցառումը շատ կարևոր



Ֆեթիյե Չեթին:

նախաձեռնություն է, սակայն նպատակը չէ լացել անցյալի համար:

«Մեր համար ամենակարևորն է այս փորձառությունը կիսել բոլորի հետ,- ասաց նա,-մենք ուզում ենք ազատվել կեղծիքից ու ստից, որ կա մեր հասարակության մեջ: Մեր հիշողությունները հետ են գալիս ու մենք բացում ենք մեր ինքնագիտակցության դռները»:

Կոնֆերանսին մասնակցում էին թուրք, հայ, ամերիկացի և եվրոպացի գիտնականներ, մտավորականներ, ինչպես նաև եկել էին մարդիկ, որոնք պատմում էին իրենց անձնական պատմությունները: 26 զեկուցում լսվեց այս հարցերի շուրջ, պատմվեցին անձնական պատմություններ:

### Շշունջներ և մրմունջներ 100 տարվա լռությունից

Ֆեթիյե Չեթինը խոսեց իր մեծ մոր մասին վերապատմելով 9 տարեկան հասակում նրա կրած մի անցքի տպավորությունը, թե ինչպես է իր տատը գետը նետում հորեղբոր երկու աղջիկներին, որպեսզի նրանք ծառա չլինեին թուրք ընտանիքներում ու հետո ինքը նետվում ջուրը:

«Նա միշտ պատմում էր այդ պատմությունը, թե ինչպես այդ երեխաները նետվեցին Տիգրիս գետ, երեխաներից մեկը գլուխը բարձրացրել է ջրից, սակայն նրա տատը ձեռքով իրել է գլուխը դեպի ջուրը, որից հետո նրանք բռնորդ անհետացան,- ասում է Չեթինը,- մենք շնջալով էինք խոսում այդ մասին ցածր ձայնով, մենք խոսում էինք այն երեխաների մասին, որոնք մեզ թողեցին առանց խոսելու հնարավորություն ունենալու»:

Չեթինն ասաց, որ ջրի մեջ շարժված երեխաները միշտ իր հետ են, ու երբ «Մեծ մայր» հրապարակվեց՝ հասարակությունը շատ ծանր տարավ



Ֆեթիյե Չեթինը տատի հետ:

այդ պատմությունը:

«Սակայն երիտասարդություն կար իմ թիկունքին կանգնած ու դա ինձ ոգեշնչում էր,- ասաց նա,- ինչի՞ համար էր այս լռությունը: Մենք չէինք կարող խոսել այդ մասին նույնիսկ մեր համար, մենք պետք է շնջալինք, սակայն այդ շշունջները այժմ խոսում են գերեզմաններից»:

Այշե Գյուլ Ալթընայի իր ելույթում ասաց, որ պատրաստվում են խզել մեկ դար ձգվող լռությունն ու երջանիկ են դա անելու:

«90 և ավելի տարի շարունակ այդ մասին միայն մրմունջներ են եղել ու հիմա սառույցը կտրվել է,- ասաց նա,- սակայն մենք նոր ենք սկսել քննարկել այս խնդիրը և չգիտենք, թե ինչ եզրեր գործածել»:

Քանի որ մահմեդականցված հայերի թեման գիտական դիսկուրս մուտք

է գործել վերջերս, այս հարցով զբաղվող գիտնականները դեռևս չունեն միասնաբար ընդունված եզրեր, թե ինչպես դասակարգել նրանց: Որովհետև տարբերակում կա այն մարդկանց միջև, որոնք բռնի իսլամացվել են և որոնք հոժարակամ են մահմեդականություն ընդունել:

«Մարդիկ շատ տարբեր ձևով են վերաբերվում իրենք էթնիկ ինքնության հարցերին,- մեկնաբանում է Այշե Գյուլը,- մենք կարևոր պատասխանատվություն ունենք ստանձնած մեր վրա՝ հասկանալու համար, թե ինչպես պիտի մոտենանք նրանց թռններին, ասելով, թե նրանք ծայրայալ հայ են, թե քուրդ են կամ ալևի են, թե՞ ուրիշ եզրեր պիտի հնարենք»:

Կոնֆերանսի մեկ այլ խոսնակ Նեբահաթ Աքոչը, ևս խոսեց իր արմատների մասին ասելով, որ սկզբից նա կարծում էր, որ թուրք է, հետո մտածեց, որ քուրդ է, հետո՝ ալևի, իսկ վերջում պարզվեց, որ հոր կողմից հայ է:

«Հորս մոր անունը Սոնա էր, բայց մենք նրան գիտեինք Սունա անունով,- ասում է նա,- շատ մարդիկ, այդ թվում և իմ տատը՝ ցույց էին տալիս, թե շատ երջանիկ են՝ մահմեդական լինելով, բայց մենք երբեք չգիտեինք ու երբեք չիմացանք, թե նրանք իրենց զգո՞ւմ էին արդյոք մահմեդական և կամ ինչ էին մտածում այդ մասին»:

Ներկայացվեց էթնիկ հայ ինքնության ընկալման տրանֆորմացիան տարբեր սերունդների համար. «Ես հայ եմ, բայց հիմա մահմեդական եմ: Նրանց երեխաները. ես հայ եմ ու մահմեդական: Հավատի հարցում՝ ես մահմեդական եմ, բայց իմ երակներում հոսում է հայի արյուն»:

### Հայ անտեր կանայք

Այշե Գյուլ Ալթընայը շեշտեց, որ անտեր բառի գործածությունն այս դեպքում շատ կարևոր է, որովհետև հայ կնոջը վերաբերվել են որպես առարկայի, որը պատկանում էր մահմեդական տղամարդուն:

«Հայ կանայք համարվել են մահմեդական տղամարդկանց սեփականությունը, և դա հովանավորվում էր պետության կողմից,- շեշտեց Այշե Գյուլը,- կանանց մի որոշ մասին մահմեդական տղամարդիկ կիսում էին իրար մեջ»:

Կնոջ մահմեդականացումը եղել է տարբեր ձևերով. շատերը մշտապես ծեծվել են իրենց ամուսինների կողմից: Կոնֆերանսում շատ խոսվեց այն մասին, որ այդ կանանց մի մասն իրենց նվիրում էին մահմեդականությանը՝ այսինքն Աստծուն, որպեսզի կարողանային հաղթահարել իրենց դժվարությունները:

Չեթինն ասաց, որ իր տատը շատ առողջ էր ու ամեն ինչ անելու կարողունակ, սակայն այդ կանանց մեծ մասն իրենց միայնակ ու լքված էին զգում:

«Նրանք մեծ ամոթ են զգում այն բանի համար, որ վկա են եղել մարդկանց կոտորածին ու չեն կարողացել խոսել ու ծայր բարձրացնել այդ մասին. սա մեզ խորապես հուզում է»,- ասաց նա:

Չեթինը շեշտեց, որ այս թեմայով խոսելու նոր ալիք է բարձրանում ու պետք է ամեն ինչ անել, որպեսզի դա հնարավորինս արագանա:

«Քանի որ մեր հասարակությունը և մենք՝ բոլորս, կարիք ունենք բուժվելու,- մեկնաբանեց նա,- ինչպե՞ս. խոսելով այդ մասին ամեն տեղ՝ համալսարաններում և այլուր, որովհետև դա է առաջ շարժվելու միակ ճանապարհը»:

Սերգեյ Վարդանյան
ՀՀ ԳԱԱ հնագիտության
և ազգագրության ինստիտուտի
գիտաշխատող

Երկու երգ Արդվինի նահանգի
Խոփայի և Բորչկայի գավառներից

Մայրիկ

(Թարգմանություն)

Մայրիկ, դու ինձ կարոտ մնացիր,
Հաց դրեցիր, կողքը, հեռու մնացիր,
Երեկո եղավ, մայրիկ (վշտերդ) քո մեջ տարար,
Այս աշխարհի բոլոր վշտերը տարար:
Մայրիկ, մտքումս մնաց քո զնգառալը,
Իմ հորից նեղվելով՝ ինձ համար լացելի,
Ասա՛, մայրիկ, ասա՛, ես էլ եմ ասելու,
Շտապ ասա՛, մայրիկ, ասելու, զնալու եմ:
Մայրիկ, ես էլ քեզ շատ կարոտեցի,
Մեկ էլ տեսնեի քեզ, ես ինձանից անցա,
Երեկո եղավ, մայրիկ, լույսը վառեցիր,
Էլի միտքս ընկար, մեջս վառեցիր:

Գաաղ մէնուշ

Քա՛, քեզ գաաղինցա,
Հէրու մէնաց լէրնուքէ,
Աչվէնութ արդէցուքէ
Մէնաց սէրդիս մէչնուքէ:
Հաբաթ՝ մէգ օր մէ գէլի,
Քաուն ու ամար քուկան,
Թէր ցմէրին ցուն քուկա,
Լէրինէ ջանփան քուկա:
Քա՛, քեզ գաաղինցա,
Հէրու մէնաց լէրնուքէ:
Լէրինէ ծաղգէնիլէ
Ձաղգի գուն մէմէգ-մէմէգ,
Իսա իմ սէրդիս ջանփան
Փացվի գու մէմէգ-մէմէգ:
Քա՛, քեզ գաաղինցա,
Հէրու մէնաց լէրնուքէ:
Ալի քեզի դէսնօղ ում,
Քա՛, սէրդիս թաղ էլլօղ էս,
Մէրօղում աշխարսիվա,

Լուս ու ծաղիկ էլլօղ էս:
Քա՛, քեզ գաաղինցա,
Հէրու մէնաց լէրնուքէ:

1. Ասում են և՛ հաբաթ, և՛ հալբաթ, նշանակում է
գուցե, երևի:

Կարոտ մնալ

(թարգմանություն)

Քա՛, քեզ կարոտեցի,
Հեռու մնաց(ին)՞ յայլաները,
Աչքերիդ արտասուքը
Մնաց սրտիս մեջ՞:
Երևի մեկ օր կլինի,
Գարուն ու ամառ կգան,
Դեռ ծմռանը ձյուն կգա,
Յայլայի ճանապարհը կգա:
Քա՛, քեզ կարոտեցի,
Հեռու մնաց(ին) յայլաները:
Յայլայում ծաղիկները
Ծաղկում են մեկիկ-մեկիկ,
Այս իմ սրտի ճանապարհը
Բացվում է մեկիկ-մեկիկ:
Քա՛, քեզ կարոտեցի,
Հեռու մնաց(ին) յայլաները:
Էլի քեզ տեսնելու եմ,
Քա՛, սրտիս դեղ ես լինելու,
Այս մութ աշխարհի վրա
Լույս ու ծաղիկ ես լինելու:
Քա՛, քեզ կարոտեցի,
Հեռու մնաց(ին) յայլաները:

1. Քա-դիմեյաձև կանանց և աղջիկներին:
2. Բնագրում՝ մէնաց, եզակի է:
3. Բնագրում՝ մէչնուքէ, հոգնակի է, թարգման-
վում է՝ մեջերը:

Յէմա

Յէմա՛, թուն ինձի գաաղ մէնացեր,
Հաց վար թէիր, յօնէ, ջօթէ մէնացեր,
Իգուն աղավ, յէմա, մէչէդ քաշէցեր,
Աս աշխարհն էմէն դարդ քաշէցեր:
Յէմա՛, մէրիս մէնաց քու ցէնքէդուշէ,
Իմ դադան վարվելօվ ինձ ամա լուշէդ,
Ասա՛, յէմա, ասա՛, յէս ալ ասօղ ում,
Ղարաթ ասա, յէմա՛, ասօղ, էրթօղ ում:
Յէմա՛, յէս ալ քեզի շաղ գաաղինցա՞,
Մէմէ դէսնէ քեզի, յէս ինձմա օնցա,
Իգուն աղավ, յէմա, լուսէ քօլէցեր,
Ալի միդէս էնգար, մէչէս քօլէցեր:

1. Յէմա- հարգալից դիմեյաձև մորը:
2. Հաճախ արտասանում են գաղղինցա:

Սկիզբը՝ 2-3-րդ էջերում:

Միայն «Հրանդ Տինք հիմնարկ»-ի
ու «Արաս» հրատարակչատան տա-
ղաւարները հայկականներն էին: Քանի
մը այլ հայանապատ հրատարակչա-
տուներու կողքին կային նաեւ հակա-
հայ հրատարակչատուներու տաղա-
արներ, որոնցմէ մէկը բազմաթիւ հա-
կահայ հատորներու շարքին Յ. Քա-
ջազունիի «Դաշնակցութիւնը անելիք
չունի» հատորին թրքերէն թարգմանու-
թեան 25-րդ տպագրութիւնը վաճառքի
դրած էր...

Քիչ առաջ խօսեցայ հայկական կող-
մին մասին: Հարկ է գիտնալ, որ հայկա-
կան կողմէն անդին, այլեւս քանի մը
տարիներէ ի վեր գոյութիւն ունի թրքա-
կան կողմ մը. «Ազդակ»-ի ընթերցողնե-
րը գայն կը ձանձնան իբրեւ «միւս թուր-
քը», որովհետեւ «այս թուրքը», որ ու-
րացողն է, ծանօթ է մեր հաւաքական
յիշողութեան: Գիտաժողովի գեկուցող-
ներէն ու մասնակիցներէն շատերը այդ
«միւս թուրքեր»-էն էին, մանաւանդ՝
երիտասարդ աղջիկ ու տղաք, ուսա-
նող-ուսանողուհի, որոնք այս կամ այն
ծելով հայկական նիւթ մը ուսումնա-
սիրութեան նուիրուած են: Այս սերուն-
դին համար Յեղասպանութիւնը
«գիւտ» մըն է, արգիլեալ ու համեղա-
ձաշակ պտուղ մը, որուն փնտռտուքին
ետեւէն են, յատկապէս բերանացի
պատմութեան (oral history) բնագաւա-
ռին մէջ խորանալով: Երբեմն հայկա-
կան կողմերէ մտահոգութիւն կ'արծա-

նագրուի, որ այսպիսի թուրքերուն եւ
քիւրտերուն թիւը կը բազմանայ, կար-
ծես ստով «մեր» միւթը մեր ձեռքէն եր-
թար: Իրականութեան մէջ, որքանով որ
Յեղասպանութիւնը «մեր» նիւթն է,
նոյնքան ալ «իրենց» նիւթն է, թերեւ
այս հանգումին շատ աւելի իրենց
նիւթն է, որովհետեւ նոր սկսած են
պրպտումներու, եւ անշուշտ, տեղ մը
«բոլորին» նիւթն է՝ իբրեւ «մարդկութե-
ան դէմ գործուած ոճիր»: Հետեւաբար
գայն նեղագգայնացնելը կրնայ միայն
վնասակար հետեւանք ունենալ: Մեր
պատմական փորձառութիւնը կը թե-
լադրէ, որ «այս» եւ «միւս» թուրքին
հանդէպ գգուշ ըլլանք, մանաւանդ
անոր համար, որ «միւս»-ը կրնայ յան-
կարծ «այս»-ութեան վերադառնալ, եւ
պատահած ալ է: Գերգուշութիւնը,
սակայն, օգտակար խորհրդատու մը
չէ միշտ:

Բոլորս ալ գիտենք, որ թուրք-հայ
ամբողջական վստահութիւնը կը վե-
րահաստատուի, երբ քաղաքական
ոճիրին քաղաքական ու ամբողջական
սրբագրութիւնը տեղի կ'ունենայ, իր
իրաւական բոլոր հետեւանքներով, ինչ
որ առաջին՝ ճանաչման քայլէն ետք
գալիք տասնամեակներու դժուար հո-
լովոյթ մըն է ինքնին: (Գերմանիոյ օրի-
նակը աչքիս առջեւ է. ո՛չ վճարուող
գումարները, ո՛չ կատարուած լուսա-
բանման բազմապիսի աշխատանքնե-
րը արտատած են): Այդ ամբողջական
արդարութիւնն է որ կրնայ գիտութեան
եւ անկաշականգ գործելակերպ շնոր-

հել: Այդ գործելակերպին բացակայու-
թեան, ու ներկայ կացութեան հակա-
ռակ, սակայն, մենք դեռ շատ ընելիք
ունինք գիտական ու քաղաքական
մարզերուն մէջ: Կատարուած բոլոր
դրական իրագործումներուն ու ճիգե-
րուն առընթեր, որակաւորման ու ինք-
նանորոգման հրամայականի առջեւ կը
գտնուին Հայաստանի եւ Սփիւքի օս-
մանագիտական, թրքագիտական եւ
ցեղասպանագիտական ամպիոններն
ու դասընթացքները, յաճախ կախեալ՝
միայն անհատներու կամ մեղ խմբակի
մը գործունէութենէն. արդարեւ, թէ՛ մե-
թոտի, թէ՛ մարդուծի, թէ՛ ծանուցման
վերանայելի հարցեր կան: Հարկաւ-
մեակին ալ պատրաստութիւնները ար-
տաքին ճակատի աշխատանքին կող-
քին ու նոյնիսկ անկէ առաջ, շատ ներ-
քին, ներհայկական մակարդակի վրայ
տարուելու են, բնականաբար առանց
կորսնցնելու կապը արտաքին աշխար-
հին հետ:

Ուսուցողական բազմամեթոտ աշ-
խատանք մը անհրաժեշտութիւն է, որ
ընդգրկէ մանկապարտէզէն մինչեւ հա-
մալսարանական եւ ոչ գիտական մա-
կարդակները: Ամբողջ ազգին գլխուն
եկած այս մահահարուածը ազգովին
դիմագրաւելու աշխատանքը գայն
տանելի կը դարձնէ: Պահանջելու, գայ-
րանալու, կրկնելու, յիշելու եւ յիշեցնե-
լու բոլոր մակարդակներուն զուգահեռ
նաեւ իւրացնելու շատ նուրբ հասկա-
ցողութիւն մը կայ, որ խորացումի կը
կարօտի: Պիտի հարցնէք իրաւամբ, որ

արդեօ՞ք առանց իւրացուցած ըլլալու
կը պահանջենք, կը գայրանանք, կը
կրկնենք, կը յիշենք ու կը յիշեցնենք.
խօսքս առաջին իւրացումէն ետք եկող
երկրորդ իւրացման մասին է: Եղեռնին
ժամանակակից գրիչ մը թելադրակա-
նօրէն «Արիւն եւ աւիւն» կոչած է իր
հատորը:

Այդ երկուքին կապը երկրորդ իւ-
րացման աշխատանքին կրնայ սատա-
րել, ըստ իս: Ու ճիշդ հոս, թերեւս, կա-
րենան իսլամահայերը իրենց աշխար-
հագրական ու պատմական փորձա-
ռութեամբ, իրենց անցեալի արեամբ ու
ներկայի աւիւնով աշխուժացումի դեր
մը խաղալ: Պէտք չէ, սակայն, ամէն ինչ
դրական գոյներով ներկել, մանաւանդ
երբ այս օրերուս անմիջականօրէն
կ'ապրինք իսլամական կրօնին նկատ-
մամբ իրաւացի ու անիրաւ վերապա-
հութիւններ ու անոնցմէ անդին՝ դէպ-
քեր:

Վերադառնալով հարցումին՝ կ'ու-
զեմ շեշտել, որ թրքական պետութեան
«թոյլտուութեան» կարելիութենէն շատ
անդին անցնող՝ մեր ներքին ճակատ-
ներուն վրայ կատարուելիք շարժում-
ներէն կերպաւորիչ հանգամանք պա-
հանջելի է:

Շնորհակալութիւն «Ազդակ»-ի խմ-
բագրութեան այս կարելիութեան ու
ձեր համբերութեան համար:

(Արտատպւած է կրճատումներով)
«Ազդակ», Բեյրութ,
9 դեկտեմբերի, 2013 թ.

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՉԱՄՇԵՆ» հայրենակական-քաղաքական հասարակական կազմակերպություն:
Գրասենյակ՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Գեղարխուս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին:
Արտատպության կամ մեջբերման դեպքում հղումը՝ Չայն համընկանին՝ պարտադիր է: Գրատարակվում է 2004թ. օգոստոսից:

“ДЗАЙН АМШЕНАКАН” (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации “АМШЕН” (г. Ереван),
Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издается с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. “HAMSHEN” Compatriotic-charitable public organization (Yerevan).
“DZAYN HAMSHENAKAN”. Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org